



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-Ռուսական համալսարանի  
Ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Է.Մ. Սանդոյան

«01» հուլիսի 2024 թ.

### ԿԱՐԾԻՔ

Արման Սամվելի Համբարձումյանի «ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2024 թվականի հուլիսի 1-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 10-24):

Մասնակցում էին՝

- Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Ներսեսյան Կարեն Վասիլիի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝ տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, Չախոյան Էլիզա Միքայելի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Կարապետյան Էդգար Գագիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Պետրոսյան Իրինա Բորիսի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, Սարգսյան Ռուզաննա Աշոտի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Տիգրանյան Վարսիկ Իշխանի, տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Մնացականյան Լիդա Արմենի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Գասպարյան Ռուբեն Լևոնի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս (գրախոսող), Խաչատրյան Հովակիմ Խաչիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ (գրախոսող), Խուրբարյան Նարեկ Համլետի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հակոբյան Էսթեր Աշոտի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Հակոբյան Արմինե Արզումանի՝ ավագ դասախոս, Ավետիսյան Լարիսա Աշոտի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Աղաջանյան Արմինե Վլադիմիրի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Հանիսյան Հրայր Հովիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Պետրոսյան Գարիկ Արմենակի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Պետրոսյան Հեղինե Գագիկի՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, Նաշիկյան Լիլիա Աշոտի՝ ավագ դասախոս, Սարգսյան Լիլիթ Կարենի՝ ավագ դասախոս, Կարապետյան Անուշ

Արմենի՝ դասախոս, Պապյան Զինավարդ Կարենի՝ դասախոս, Շմավոնյան Էլեն Հակոբի՝  
ասիստենտ:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ֆինանսական ոլիսկերը, որոնք օժտված են տնտեսական կայունությունը խաթարելու մեծ ներուժով, կարող են լուրջ հիմնախնդիրներ ստեղծել ՀՀ բանկային համակարգի համար: Ուստի ոլիսկերի ոչ համարժեք կառավարումը կարող է բանկերի գործունեության ճախողման պատճառ դառնալ՝ հանգեցնելով ավանդատուների վստահության կորստին, համակարգային ճգնաժամերի և այլ բացասական հետևանքների: Վերահսկիչ կառուցակարգերը (մեխանիզմները), ինչպիսիք են ոլիսկերի գնահատման գործիքները, սթրես թեստավորումը և կանոնակարգային համապատասխանությունը, կենսական նշանակություն ունեն այս ոլիսկերը մեղմելու համար և ամբողջապես համապատասխանում են ՀՀ առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի գործարար ծրագրերում առաջադրված խնդիրներին: Դրանք պարզապես ակադեմիական վարժություններ չեն. ֆինանսական զարգացող լանդշաֆտների և տնտեսական փոխկախվածության աճի դարաշրջանում այս հասկացությունների ըմբռնումն ու կիրառումը հիմնարար նշանակություն ունեն Հայաստանի բանկային հատվածի համար:

Վերահսկիչ սթրես թեստավորումը, որը կիրառվել է դեռևս 2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ժամանակ և ունեցել մեծ դերակատարություն դրա հաղթահարման գործում, հանդես է գալիս որպես բանկի «առողջության» ախտորոշիչ գործիք: Հետևաբար՝ հատկապես Հայաստանի նման երկրում, որն ունի դինամիկ զարգացող տնտեսական միջավայր, փոքր և բաց տնտեսություն և ներկայումս էլ բախվում է արտաքին ցնցումների ու աշխարհաքաղաքական բարդությունների, որոնք կարող են ալիքային ազդեցություն ունենալ նրա ֆինանսական ինստիտուտների վրա, դա իսկապես առանցքային և անփոխարինելի գործիք է:

Բացի այդ, Հայաստանի տնտեսությունը ուղղակի և անուղղակի կերպով կապված է տարածաշրջանի մի շարք պետությունների հետ, ինչը ենթադրում է, որ տարածաշրջանային լարվածությունը կամ առևտրի խանգարումները կարող են էականորեն ազդել նրա ֆինանսական հատվածի վրա: Վերահսկիչ սթրես թեստավորումը հնարավորություն է տալիս մոդելավորելու և գնահատելու, թե ինչպես կգործեն հայաստանյան բանկերը համանման իրավիճակներում, բացահայտելու բանկերի խոցելիության աստիճանը և մշակելու ոլիսկերի մեղմման ռազմավարություն:

Հետևաբար՝ կարող ենք ասել, որ վերահսկիչ սթրես թեստավորումը Հայաստանի բանկային համակարգի համար հուսալի հենարան է՝ ֆինանսական կայունություն ապահովելու, հաճախորդների շահերը պաշտպանելու և առհասարակ գործունեության շարունակականություն ապահովելու առումով:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ատենախոսության նպատակն է հետազոտության արդյունքներով ձևավորված մոտեցումներով կատարել առաջարկություններ ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ոլիսկերի ներքին վերահսկողության համակարգի կատարելագործման հիմնախնդիրների լուծման ուղղություններով:

Ատենախոսության հիմքում դրված նպատակին հասնելու համար ուսումնասիրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել ՀՀ բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարման և վերահսկողության գործընթացները,
- ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերի գործունեությունը կարգավորող ՀՀ և միջազգային իրավական ակտերը՝ ՀՀ առևտրային բանկերի տնտեսական նորմատիվների և ռիսկերի վերահսկողության վերաբերյալ առաջարկություններ կատարելու նպատակով,
- ուսումնասիրել ընթացիկ վերահսկողական սթրես թեստավորման փորձի արդյունավետությունը՝ ՀՀ առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի բացահայտման և մեղմացման տեսանկյունից,
- դիտարկել բանկերի թվային վերափոխման ընթացքում առաջացող կիրառանվտանգության ռիսկերը՝ առաջարկելով համապատասխան ռազմավարություններ դրանք արդյունավետորեն մեղմելու համար,
- գնահատել թվային փոխակերպման ազդեցությունը ՀՀ առևտրային բանկերում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության վրա,
- ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերում վարկային ներդրումների կենտրոնացվածության աստիճանը՝ բարձր կենտրոնացումները բացահայտելու նպատակով,
- վերլուծել ՀՀ առևտրային բանկերում կիրառվող կենտրոնացման համաթվերը, բացահայտել հնարավոր խոցելիությունը՝ կենտրոնացման բացահայտումների առումով՝ առաջարկելով կենտրոնացումների գնահատման նոր մոտեցումներ՝ ֆինանսական կայունության մակարդակը բարձրացնելու նկատառումով:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ**

Ատենախոսության հիմնական արդյունքը առևտրային բանկերի ներքին վերահսկողության համակարգի կատարելագործմամբ ֆինանսական ռիսկերի կանխարգելման նոր մոտեցումների մշակումն է, որը հիմնավորվում է հետևյալ գիտական նորույթներով՝

1. Բացահայտվել են ՀՀ առևտրային բանկերի ներքին վերահսկողության համակարգում ֆինանսական ռիսկերի ճանաչման և գնահատման առանձնահատկությունները և դրանց հիման վրա առաջարկվել ռիսկերի վերահսկողության իրականացման բարելավված գործիքակազմ՝ գործոնային համապարփակ վերլուծական հիմքով:
2. Հիմնավորվել ու հստակեցվել են վերահսկիչ սթրես թեստավորման կիրառման անհրաժեշտությունն ու ուղղությունները՝ որպես ՀՀ բանկերում ռիսկերի համապարփակ գնահատման և մեղմացման գործիք: Ապացուցվել է, որ տարբեր սթրեսային սցենարների միաժամանակյա մոդելավորմամբ հնարավոր է ավելի ամբողջական պատկերացում կազմել բանկերի առջև ծառայած ռիսկերի վերաբերյալ, բացահայտել խոցելիության աստիճանը, ինչպես նաև մշակել ռիսկերի կառավարման համապատասխան ռազմավարություն՝ միտված բանկերի ճկունության և ֆինանսական կայունության ապահովմանը:



3. Մշակվել և առաջարկվել է ֆինանսական ռիսկերի դիվերսիֆիկացման գնահատման մոտեցում, հիմք ընդունելով Հերֆինդալ-Հիրշմանի, Լինդայի և Էնթրոպիայի գործակիցների վերլուծական փոխլրացնող արդյունքները, որի միջոցով ՀՀ առևտրային բանկերը հնարավորություն կունենան արդյունավետ վերահսկելու տնօրինվող ակտիվների տեղաբաշխման ճյուղային կառուցվածքն ըստ բնութագրիչ ռիսկերի:
4. Մշակվել է առևտրային բանկերի գործունեության թվային փոխակերպման գործընթացում ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության ճկուն համակարգ, որով հնարավորություն է ստեղծվում բարելավելու վերահսկողական գործընթացները և միաժամանակ բացահայտելու ֆինանսական միջնորդության էկոհամակարգի արտաքին ու ներքին ռիսկային մարտահրավերները:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը իրենից ներկայացնում է ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողությանն ուղղված, մեթոդական մոտեցումների տեսական և գիտական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի առաջարկություններ՝ ուղղված ատենախոսությամբ առաջ քաշված հիմնախնդիրների կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքները և կատարված առաջարկությունները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ Կենտրոնական և առևտրային բանկերում՝ նպաստելով ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության լավարկմանը: Ստացված արդյունքները գործնականում օգտակար կարող են լինել նաև ֆինանսների և ռիսկերի կառավարում դասավանդողներին և դրա վերաբերյալ հետազոտություններ իրականացնողներին:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ յուրաքանչյուրը երկու-երեք ենթագլուխներով, եզրակացությունների և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսությունը շարադրված է 138 էջի վրա (ներառյալ հավելվածները), պարունակում է աղյուսակներ, գծապատկերներ և թվով 12 հավելվածներ:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են առարկան և օբյեկտը, ներկայացված են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերլուծությունը եվ հիմնախնդիրների բացահայտումը» գլխում ուսումնասիրվել են ֆինանսական ռիսկերի կառավարման և վերահսկողության մոտեցումները ՀՀ առևտրային բանկերում: Այնուհետև հեղինակի կողմից ուսումնասիրվել են ՀՀ առևտրային բանկերում

վարկային ռիսկի սթրես-թեստավորման միջոցով կառավարման հիմնախնդիրները, ինչպես նաև իրականացվել է վարկային ռիսկ կրող ակտիվների վրա մակրոտնտեսական և ներքին գործոնների ազդեցության մոդելային գնահատում:

Ատենախոսության երկրորդ «ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի վերլուծությունը և հիմնախնդիրների բացահայտումը» գլխում ուսումնասիրվել են Ֆինանսական ռիսկերի կառավարման և վերահսկողության մոտեցումները ՀՀ առևտրային բանկերում, քննարկվել են ՀՀ առևտրային բանկերում վարկային ռիսկի սթրես-թեստավորման միջոցով կառավարման հիմնախնդիրները, իրականացվել է վարկային ռիսկ կրող ակտիվների վրա մակրոտնտեսական և ներքին գործոնների ազդեցության մոդելային գնահատում:

Ատենախոսության երրորդ՝ «Ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության հեռանկարային միտումները եվ բարելավման ուղիները» գլխում հեղինակը ուսումնասիրել է կարգավորողի կողմից համաժամանակյա (վերահսկիչ) սթրես թեստավորման կիրառումը ՀՀ առևտրային բանկերում: Հեղինակը նաև քննարկել է ՀՀ առևտրային բանկերի գործարար անընդհատության ապահովման բարելավման և կենտրոնացվածության ռիսկի կառավարման ինդեքսային եղանակների կիրառման հեռանկարները հեռանկարները:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Թեև աշխատության մեջ ներկայացված են կիրառանվտանգության ռիսկերի վերաբերյալ որոշ գնահատականներ և ռազմավարություններ, սակայն դրանց մանրամասները և հստակ ռազմավարությունները կարող են պահանջել ավելի խորացված ուսումնասիրություն և գործնական կիրառություն:
2. Հեղինակը 2.2. գլխում նշում է, որ «Համաշխարհային բանկի տվյալների համաձայն Հայաստանի տնտեսությունը հետ է մնում մի շարք երկրների տնտեսություններից չաշխատող վարկերի մեծ թվով», իսկ աղյուսակ 2.2.1-ում համեմատություն է արվում մի շարք երկրների հետ: Վերլուծությունից հստակ չի հասկացվում արդյոք այս ցուցանիշով Հայաստանը գտնվում է ավելի լավ, թե վատ համեմատական դիրքում: Նաև չի հստակեցվում, թե ինչու են ընտրվել հենց այս երկրները համեմատության համար: Նույն գլխում հեղինակը նաև նշում է, որ չաշխատող վարկերի նվազման պատճառներից մեկը ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանումն է որպես ժամկետանց, ինչը անհասկանալի պնդում է, ունի հստակեցման կարիք և անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան որոշմանը: Կարևոր է նաև բացահայտել, թե ինչ ազդեցություն ունի այս որոշումը ցուցանիշի պատմական դինամիկայի վրա:
3. Չաշխատող վարկերի գործակցի վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության վերլուծությունը կատարելիս հեղինակը չի բացահայտում օգտագործած տվյալների աղբյուրները և փոփոխականների ձևափոխումները: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը հիմնավորեր մեթոդաբանության, ենթադրված մոդելի ֆունկցիոնալ տեսքի ընտրությունը: Անկախ փոփոխականների և համապատասխան գործակիցների ստանդարտացման միջոցով հնարավոր էր գնահատել առանձին գործոնների և



չաշխատող վարկերի գործակցի փոխկապակցվածության կշիռը և բացահայտել առավել կարևոր մակրոտնտեսական գործոնները:

4. Հեղինակի կողմից ներկայացվել են վերահսկիչ սթրես-թեստավորման կիրառման անհրաժեշտությունը և դրա կիրառման ուղղությունները: Բավարար հիմնավորված չեն սթրես-թեստավորման սցենարների պարամետրերը. օրինակ, հիմնական սցենարով ենթադրվում է վարկային պորտֆելների 5%-ի դուրսգրում, ինչը հիմնավորված չէ աշխատանքում: Նույնպես հիմնավորված չեն մյուս երկու սցենարների ընտրությունը: Հաշվի չեն առնվում վարկերի դուրսգրման ժամանակահատվածը, վարկերի ապահովվածությունը և անհատական բանկերի պորտֆելների յուրահատկությունները: Կապիտալի պահանջի բարձրացման առաջարկը, որպես արդյունք, պետք է դիտարկել նաև բանկային համակարգի զարգացման տեսանկյունից, քանզի չափազանց բարձր կապիտալի պահանջը կարող է զսպող գործոն հանդիսանալ բանկի և բանկային համակարգի զարգացման համար: Աշխատանքը կշահեր, եթե ի հավելումն անհատական բանկերի վրա սթրես-թեստավորման արդյունքների գնահատվեր ընդհանուր բանկային համակարգի վրա ռիսկերի ազդեցությունը:
5. Աշխատանքը էապես կշահեր, եթե մանրամասն անդրադարձ կատարվեր ՀՀ ԿԲ վարկերի դասակարգման ու պահուստավորման և հիմնականում ՖՀՄՍԳ-ը ստանդարտով մոտիվացված և բանկերի կողմից օգտագործվող ներքին մոդելներով վարկային ռիսկերի գնահատման տարբերություններին և առանձնահատկություններին: Ինչպես նաև կապիտալի հաշվարկի տարբերություններին, այդ թվում նաև սթրես-թեստավորման համատեքստում:
6. Աշխատանքում ատենախոսը կատարել է զգալի աշխատանք վարկային ռիսկի և վարկառուի վարկունակության գնահատման սցենարային մոդելավորման, վարկային ներդրումների կենտրոնացումների վերաբերյալ: Վարկային ռիսկի գնահատման տեսանկյունից աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը ներկայացներ վարկային ռիսկի կենտրոնացումները բացահայտելու, չափելու, մոնիթորինգի ենթարկելու և կառավարելու վերաբերյալ համապատասխան մեթոդաբանական լուծումներ, որոնք պետք է վերաբերվեն վարկային ռիսկի կենտրոնացումների տարբեր դրսևորումներին, մասնավորապես՝
  - վարկային ռիսկի կենտրոնացումները միևնույն տնտեսական ոլորտում և վարկային ռիսկի կենտրոնացումները միևնույն աշխարհագրական վայրում,
  - վարկային ռիսկի կենտրոնացումներն այն անձանց շրջանում, որոնց ֆինանսական դրությունը կախված է միևնույն ապրանքի/ծառայության գնից, կամ որոնք զբաղվում են նմանատիպ գործունեությամբ/գործում են միևնույն շուկայում/որդեգրել են նմանատիպ ներդրումային ռազմավարություն,
  - կոնկրետ անձին կամ փոխկապակցված անձանց խմբին տրամադրված խոշոր փոխառությունները,
  - վարկային ռիսկի անուղղակի կենտրոնացումները, օրինակ՝ միատեսակ գրավի գծով, մեկ երաշխավորի գծով կենտրոնացումները և այլն:
7. Վարկային ակտիվների գնահատման տեսանկյունից՝ ատենախոսության մեջ անհրաժեշտ էր անդրադառնալ բանկերի համար սահմանվող վարկային ռիսկը զսպող

հիմնական տնտեսական (Ն3 1 , Ն3 2, Ն4 1 Ն4 2 ) նորմատիվների սահմանաչափերին, տարբեր ժամանակահատվածներում այդ նորմատիվների փաստացի մեծություններին և գնահատել ըստ տարբեր ժամանակահատվածների հիմնական տնտեսական նորմատիվների փոփոխությունների միտումները և կատարել սցենարային վելուծություններ:

8. Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 54.1 հոդվածի (Բանկերի գործունեության կարգավորման, բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը կարող է բանկերի կամ առանձին բանկի համար սահմանել հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) շեմ (շեմեր): Ատենախոսությունը կշահեր, եթե դիտարկվեին նաև վերոնշյալ հարցերը, քանի որ բանկային համակարգի ակտիվների որակական հատկանիշների գնահատման տեսանկյունից՝ հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերի իջեցումը կարող է նվազեցնել առանձին բանկերի ռիսկայնության աստիճանը, ինչպես նաև իրականացնել համապատասխան մոդելների/մեխանիզմների/ սցենարների մշակում, թե յուրաքանչյուր նորմատիվի սահմանաչափի նվազեցումը կամ ավելացումը ինչ ազդեցության կունենա բանկային համակարգի ֆինանսական կայունության և/կամ տնտեսության վրա: Հարկ է նշել, որ 31.12.2023թ.-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների մոտ 33.13 տոկոսը և ընդհանուր պարտավորությունների մոտ 34,4 տոկոսը, ինչպես նաև 31.03.2024թ.-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների մոտ 33,85 տոկոսը և ընդհանուր պարտավորությունների մոտ 35,3 տոկոսը գտնվում են «Արդշինբանկ» ՓԲԸ-ում և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, որը փաստում է բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների որոշակի կենտրոնացման մասին:
9. Ատենախոսության 54-րդ էջում հեղինակը որպես սթրես-թեստավորման առաջին սցենար իրականացրել է ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի հինգ տոկոսի դուրս գրում և 2.2.2 աղյուսակում ներկայացրել է ՀՀ առևտրային բանկերի սթրես թեստավորման արդյունքները: Հիմք է ընդունվել բանկերի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:
10. Աշխատանքի 2.2.2 աղյուսակում ներկայացված տվյալները թերի են և հեղինակի կողմից դիտարկված բանկերի վարկային ներդրումներից դուրս գրված հինգ տոկոս վարկերի գումարների մեծությունները ճշգրիտ չեն: Աշխատանքում չեն ներկայացվել աղյուսակում ներառված տվյալ բանկերի ընդհանուր վարկային ներդրումների գումարային մեծությունները: Առանձնացնենք 31.12.2023թ.-ի դրությամբ ճշգրտված հետևյալ օրինակները՝
- «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հաճախորդների տրամադրված ընդհանուր վարկային ներդրումները կազմել են 984,746,562 հազ. ՀՀ դրամ, որի հինգ տոկոսը կազմում է 49,237,328 հազ. ՀՀ դրամ:
  - «Արդշինբանկ» ՓԲԸ-ի հաճախորդներին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումները կազմել են 671,580,291 հազ. ՀՀ դրամ, որի հինգ տոկոսը կազմում է 33,579,014 հազ. ՀՀ դրամ:



- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի հաճախորդներին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումները կազմել են 271,831,024 հազ. ՀՀ դրամ, որի հինգ տոկոսը կազմում է 13,591,551 հազ. ՀՀ դրամ:
- «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի հաճախորդներին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումները կազմել են 291,399,068 հազ. ՀՀ դրամ, որի հինգ տոկոսը կազմում է 14,569,953 հազ. ՀՀ դրամ: Հետևաբար, հեղինակի կողմից իրականացված սթրես-թեստավորման արդյունքները, որոնք ներկայացված են աշխատանքի աղյուսակ 2.2.2-ում և աղյուսակ 2.2.3-ում ճշգրիտ չեն:

11. Ատենախոսը իր աշխատանքում առաջարկում է իրականացնել Համաժամանակյա կամ վերահսկիչ սթրես թեստերի ներդնումը: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը իրականացներ համապատասխան վերլուծություններ ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ» կանոնակարգ 4-ով սահմանված Սթրես-թեստավորման գործընթացի վերաբերյալ: Միաժամանակ գնահատեր միագործոն սթրես-թեստերի, սցենարային սթրես-թեստերի ու հակադարձ սթրես-թեստերի ազդեցությունը և դրանց արդյունավետությունը:
12. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը գնահատեր սթրես-թեստերի արդյունքները՝ կիրառելով նաև դրանք բանկի երկարաժամկետ գործարար ծրագրերի կազմման, վերականգնման ծրագրերի մշակման, ինչպես նաև բանկի ռազմավարական պլանավորման գործընթացում:
13. Ատենախոսն իր աշխատանքի 3.2 կետում անդրադարձել է ՀՀ առևտրային բանկերի գործարար անընդհատության ապահովման բարելավման հեռանկարներին և բանկերում թվային տեխնոլոգիաների ներդրմանը: Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը աշխատանքում անդրադառնար գործառնական և տեղեկատվական անվտանգության ռիսկերին: Կատարեր համապատասխան գնահատումներ ՀՀ կենտրոնական բանկի «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգով սահմանված՝ տեղեկատվական համակարգերում առկա ռիսկերի կառավարման, գործարար գործընթացների անընդհատության ապահովման, թեստավորման կազմակերպման և «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ» կանոնակարգ 4-ով սահմանված գործարար գործընթացների անընդհատության կառավարման պահանջները, ներկայացներ գործարար անընդհատության ապահովման բարելավմանն ուղղված առաջարկներ, ինչպես նաև վերլուծեր վերոգրյալ պահանջների թույլ և ուժեղ կողմերը:
14. Աշխատանքի 105 էջի 3.3.1 աղյուսակում ներկայացված են 2023թ-ի ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի տեղաբաշխումն ըստ տնտեսության ճյուղերի: Թվային շարքում կան անճշտություններ և աղյուսակ 3.3.1-ում ներկայացված առևտրային բանկերի վարկային ներդրումները և վարկերի ճյուղային կառուցվածքը ըստ վարկերի գումարների ճշգրիտ չեն: Օրինակ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի 2023թ-ի դեկտեմբերի տեղեկագրի «Վիճակագրական ամփոփագիր» բաժնի առևտրային բանկերի կողմից ըստ տնտեսության ճյուղերի տրամադրված սպառողական վարկերը կազմում է 1,085,700. մլն. ՀՀ դրամ, հիփոթեքային վարկերը՝ 1,073,817. մլն. ՀՀ դրամ,



առևտուրը՝ 572,914. մլն.ՀՀ դրամ, շինարարությունը՝ 497,788 մլն.ՀՀ դրամ և գյուղատնտեսությունը՝ 285,572. մլն.ՀՀ դրամ և այլն:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արդյունքների տեսական ու կիրառական նշանակության վրա:

Արման Սամվելի Համբարձումյանի «ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով թեկնածականատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Արման Սամվելի Համբարձումյանի «ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ռիսկերի ներքին վերահսկողության կատարելագործման հիմնախնդիրները» թեմայով թեկնածուականատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուականատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

**Նիստի նախագահ՝**

Հայ-Ռուսական համալսարանի Ռեկտոր,  
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,  
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Է. Մ. Սանդյան

Հայ-Ռուսական համալսարանի

«Տնտեսագիտության տեսության

և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրներ»  
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ի. Բ. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի

«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի  
ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝

Ռ.Լ. Գասպարյան

Հայ-Ռուսական համալսարանի  
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի

դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու՝



Հ.Խ. Խաչատրյան

Հայ-Ռուսական համալսարանի  
գիտական քարտուղար,  
բան. գիտ. թեկնածու՝

Ռ. Ս. Կասաբաբովա